01/10.1/646-09

2009-02-04

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Կարեն Ավագյանի, Արմեն Մխիթարյանի, Աշոտ Արսենյանի և Ալեքսանդր Սարգսյանի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ։

1. Առաջարկում ենք 1-ին հոդվածը խմբագրել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների համաձայն, ըստ որի՝ օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս՝ հետևյալ հաջորդականությամբ ներառվում են

օրենքի վերնագիրը, «Հայաստանի Հանրապետության» բառերը, օրենքի ընդունման տարեթիվը, ամիսը, ամսաթիվը, օրենքի թիվը և «օրենք» բառը։

2. 2-րդ հոդվածով առաջարկվող՝ օրենքին հետադարձ ուժ տալու վերաբերյալ դրույթն ընդունելի չէ, քանի որ դրա հետ կապված լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ կառաջանան համայնքի՝ որպես իրավաբանական անձի և Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ, ինչը չի բխում «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 78-րդ հոդվածի պահանջներից։ Բացի դրանից, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, այն չի կարող ազդել նախկինում կարգավորված աճուրդներով վաճառված գույքի մեկնարկային գների վրա, սակայն առանձին դեպքերում կարող է նախկինում կնքված աճուրդներն անվավեր ճանաչելու իրավական հիմք հանդիսանալ, որի դեպքում կխախտվեն հողամաս ձեռք բերած բազմաթիվ սեփականատերերի իրավունքները։

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ներկայացված նախագիծը լրամշակման կարիք ունի և այս տեսքով ընդունելի չէ։

Միաժամանակ հայտնում ենք, որ ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս՝ հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գևորգ Դանիելյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ
Պ-397-01.12.2008-ՏՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացում կատարելու մասին

ՀՈԴՎԱԾ 1. Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 2-ի հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությունը « լեռնային» բառից հետո լրացնել «բարձր լեռնային, » բառերով։

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից եւ տարածվում է 2005 թվականի հոկտեմբերի 4-ից հետո ծագած հարաբերությունների վրա։

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում» լրացում կատարելու անհրաժեշտության մասին

Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածով սահմանված է հողերի աճուրդային կարգով օտարման ժամանակ մեկնարկային գնի նվազագույն շեմի կադաստրային արժեքի 50 տոկոսից ցածր շեմ՝ 30 տոկոս։ Նշված հոդվածը նման հնարավորություն նախատեսում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սամնամերձ, լեռնային (1600-2000մ), ծայրամասային բնակավայրերի համար։ Մինչդեռ ցանկի, ինչպես նաեւ Հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի թվարկման մեջ ներառված չեն բարձր լեռնային (2000մ-ից բարձր) կատեգորիայի հողամասերը։ Արդյունքում կադաստրային արժեքի 30 տոկոս նվազագույն շեմը որպես

մեկնարկային արժեք սահմանելու նորմը չի տարածվում դրա կարիքն առավել չափով ունեցող բարձր լեռնային գոտում գտնվող հողամասերի մեկնարկային գնի նկատմամբ, ինչը գտնում ենք անտրամաբանական է, ոչ արդյունավետ եւ շտկման անհրաժեշտություն ունի։ Հարկ ենք համարում տեղեկացնել , որ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի համաձայն պետության եւ համայնքների սեփականության հողամասերը գյուղատնտեսական գործունեության համար եւ որպես տնամերձ կամ անհատական բնակելի տան կառուցման եւ սպասարկման համար՝ նույնիսկ սեփականության իրավունքով անհատույց տրամադրվում են նաեւ սահմանամերձ, լեռնային, բարձր լեռնային, երկրաշարժից տուժած եւ լքված բնակավայրերում այն ընտանիքներին, որոնք նախկինում չեն օգտվել հողի սեփականաշնորհումից, չեն ստացել տնամերձ կամ բնակելի տան շինարարության եւ դրա սպասարկման համար հողամասեր։

Կարծում ենք, որ օրենսգրքում նման բացթողումը տեղի է ունեցել 2005թ հոկտենբերի 4-ին ընդունված Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու ժամանակ՝ տեխնիկական պատճառներերով, ուստի նման լրացումը անհրաժեշտ ենք համարում եւ հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 78-րդ հոդվածի 3-րդ մասը, նպատակահարմար ենք համարում Հողային օրենսգրքում վերը նշված լրացումը ընդունվելու դեպքում նրան տալ հետադարձ ուժ եւ նրա գործողությունը կիրառել 2005 թվականի հոկտեմբերի 4-ից սկսած հարաբերությունների վրա, այդ կերպ վերականգնելով արդարությունը։